Պահանջվում է ադվոկացիայի դասընթաց պատրաստելու և վարելու մասնագետ

«Ներուժ զարթոնքի» ՀԿ-ն փնտրում է մասնագետ՝ ադվոկացիայի դասընթաց անցկացնելու համար: Սույն դասընթացն անց է կացվելու «Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

Մասնագետի պարտականությունները

1. Կազմել ադվոկացիայի դասընթացի մոդուլ:

2. Կազմել դասընթացի արդյունավետության գնահատման մեթոդաբանություն և մշակել գնահատման գործիքները:

3. Իրականացնել/վարել ադվոկացիայի դասընթացը ծրագրի թիրախ հանդիսացող խմբերի շրջանում:

4. Գնահատել դասընթացի արդյունավետությունը, և պատրաստել և ներկայացնել դասընթացի մասին զեկույց՝ ամփոփագիր:

Մասնագետը պետք է՝

1) Ունենա առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ադվոկացիայի, բյուջետավորման, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ոլորտում:

2) Ունենա ադվոկացիայի և/կամ բյուջետավորման, մասնավորապես գենդերային զգայուն և մարդու իրավունքներին ուղղված բյուջետավորման մասին դասընթացներ անցկացնելու փորձ:

3) Գերազանց տիրապետի հայերեն և ռուսերեն լեզուներին

Դիմելու կարգը

Բոլոր հետաքրքրված մասնագետները պետք է ուղարկեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Համառոտ ինքնակենսագրական (CV)

2. Մոտիվացայի նամակ

Դիմելու վերջնաժամկետն է **օգոստոսի 28-ը:**

Ծրագիրն իրականացվում է Եվրասիական տարածաշրջանային կոնսորցիումի կողմից՝ Ռոբերտ Կարր ֆոնդի ֆինանսական աջակցությամբ։ Եվրասիական տարածաշրջանային կոնսորցիումը միավորում է երեք տարածաշրջանային ցանցեր՝ Վնասի նվազեցման եվրասիական ցանցը, որը ներկայացնում է թմրանյութ օգտագործող անձանց կարիքները, Տղամարդկանց առողջության եվրասիական կոալիցիան, որը ներկայացնում է SUS և տրանս* անձանց կարիքները, և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող անձանց ցանցը, որն էլ ներկայացնում է ՄԻԱՎ-ով ապրող անձանց կարիքները։

Հայաստանում ծրագիրն իրականացվում է ազգային կոնսորցիումի կողմից, որն իր մեջ ներառում է հետևյալ հասարակական կազմակերպություններին՝ «Իրական աշխարհ, իրական մարդիկ», «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (Փինք Արմենիա) և «Ներուժ զարթոնքի»:

Սույն ծրագրի շրջանակներում 2017թ-ի հուլիսից-հոկտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվում են դասընթացներ հիմնական թիրախ խմբերի համար՝ նպատակ ունենալով բարձրացնել ծրագրի թիրախ հանդիսացող հանրույթների (թմրանյութ օգտագործող անձինք, տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդիկ և տրանս* անձինք, ՄԻԱՎ-ով ապրող անձինք) ներկայացուցիչների գիտելիքն ու կարողությունները։